



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 19.12.2012

**Հոդված 1.** Հաստատել Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Հավելված  
«Հայաստանի Հանրապետության  
2013-2015 թվականների պետական  
վիճակագրական աշխատանքների  
եռամյա ծրագիրը հաստատելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ  
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը մշակվել է «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին համապատասխան եւ սահմանում է 2013-2015 թվականների պետական վիճակագրական գործունեության ուղղությունները՝ ըստ վիճակագրության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական եւ բնապահպանական բնագավառների:

Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը (այսուհետ՝ Եռամյա ծրագիր) ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական եւ բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության ձեռնարկման համար գործունեության ուղղությունները՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը եւ ծախսերի արդյունավետությունը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունից ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը եւ տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հասկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Եռամյա ծրագրի կատարումը եւ ֆինանսավորումը պայմանավորված են եւ բխում են Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեից:

### ՄԱՍ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները բխում են նաեւ նախորդ տարիների եռամյա ծրագրերով սահմանված ռազմավարական ուղղություններից՝ միտված դրանց

շարունակականության ապահովմանը:

Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունն ուղղորդված է «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հիմնական խնդիրների իրագործման ապահովմանը եւ խարսխվում է Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում (15-ը ապրիլի 1992թ.) եւ Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի (14-ը ապրիլի 1994թ.) ընդունած պաշտոնական վիճակագրության 10 հիմնարար սկզբունքների, ինչպես նաեւ ի լրումն այդ սկզբունքների՝ Եվրախորհրդի վիճակագրական ծրագրային կոմիտեի ընդունած (24-ը փետրվարի 2005թ.) եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով սահմանված 15 սկզբունքների, Եվրոպական հանձնաժողովի եւ Եվրամիության վիճակագրական ծառայության Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոչակագրի (2002թ.), Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի (2007թ.) պահանջների, Տվյալների որակի գնահատման վերաբերյալ Ստանդարտների եւ կոդերի համապատասխանության Հայաստանի վերաբերյալ զեկույցի (2009թ.), ինչպես նաեւ Եվրամիության փորձագետների կողմից (Եվրահանձնաժողով՝ Եվրոստատ, Ազատ առեւտրի եվրոպական ընկերակցություն, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության ազգային համակարգի գնահատման արդյունքների (2008թ.) եւ Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 2009թ. մարտի 11-ի N 223/2009 Կանոնակարգով հաստատված «Եվրոպական վիճակագրության իրավական շրջանակ. Վիճակագրության մասին օրենքի» (2010թ.) դրույթների ու դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների ու ստանդարտների վրա:

Համաձայն պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների՝ վիճակագրությունը պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, հանրության, բիզնեսի պահանջմունքների բավարարման համար ծրագրային աշխատանքի ընթացքում պետք է ապահովի անկողմնակալություն (անկախություն), տեղեկատվությունից օգտվելու հավասար մատչելիություն, պրոֆեսիոնալ ստանդարտներ, արդյունավետություն, հաշվետվողականություն եւ թափանցիկություն, սկզբնական (անվանական) տվյալների գաղտնիություն եւ այլն: Հարկ է, որ սպառողները Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը ընկալեն որպես որոշակի քաղաքականության կողմնորոշված պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող կազմակերպություն: Անհրաժեշտ է ձեւավորել վարչական եւ նմանատիպ շահերի միջեւ առկա բախումներում պաշտոնական վիճակագրությանը չներքաշելու երաշխիքներ:

Պետական վիճակագրության հիմնական խնդիրների եւ հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով մասնավորապես նախատեսվում է՝

- 1) վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրական հարաբերությունները կարգավորող իրավական համապատասխան փոփոխությունների իրականացումը.
- 2) վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաեւ վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով շարունակել եւ ընդլայնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը.
- 3) վիճակագրական տվյալների որակի եւ թափանցիկության ապահովման նպատակով շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի մշակված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), որոնք ենթադրում են նաեւ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի անխափան շահագործում եւ տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաեւ մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում.
- 4) վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց՝ շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության եւ արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաեւ հնարավորինս նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը.

5) համալրել, արդիականացնել եւ ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեզիստորի տվյալների բազան (իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի մասով) եւ որպես դրա հետեւանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքման ընտրանքային եղանակների կիրառմանն ու ընդլայնմանը.

6) շարունակել տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողավորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման, ինչպես նաեւ արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները.

7) անցում կատարել վարչական ռեզիստորների միջոցով տեղեկատվության հավաքման մեխանիզմի կիրառման ընդլայնմանը՝ հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը.

8) տեղական (համայնքային) վարչական ռեզիստորների (ներառյալ՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը եւ վարմանը զուգընթաց՝ կատարելագործել եւ ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը.

9) շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները.

10) ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման, ինչպես նաեւ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ եւ կիրառմամբ իրականացնել միջոցառումներ տեղեկատվության էլեկտրոնային հավաքման ուղղությամբ.

11) բարձրացնել վստահությունը վիճակագրական տեղեկատվության նկատմամբ՝ կատարելագործելով վիճակագրության համապատասխան իրավական դաշտն ու տվյալների տարածումը, առավել խոր ուսումնասիրելով սպառողների պահանջները եւ կարիքները, նպաստել վիճակագրական տեղեկատվության լայնորեն օգտագործմանը, այդ թվում՝ որոշումներ ընդունելիս, մշտադիտարկում եւ գնահատականներ իրականացնելիս.

12) շարունակել երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական եւ բնապահպանական վիճակը բնութագրող վիճակագրական տեղեկատվություն պարունակող, ինչպես նաեւ ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրերի, ժողովածուների եւ այլն) թողարկումը, ինչպես նաեւ կատարելագործել դրանց կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական բավարարման նպատակով.

13) կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

## ՄԱՍ 2

### ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Վիճակագրության ոլորտը բնութագրվում է մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, որը պայմանավորված է մի կողմից՝ տվյալների արժանահավատության, օպերատիվության, տեղեկատվության ստացման գիտական հիմնավորվածության եւ միջազգային չափանիշներին համապատասխանության առումով մշտապես աճող պահանջներով, մյուս կողմից՝ սկզբնական (անվանական) բոլոր տիպի տվյալների չտարածմամբ:

Վիճակագրության հետագա զարգացումը 2013-2015 թվականներին նախատեսվում է իրականացնել հետեւյալ հիմնական միջոցառումային ծրագրերի շրջանակում:

## ԲԱԺԻՆ 2.1

### ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ

#### 2.1.1. Ազգային հաշիվներ

1) «Ազգային հաշիվների համակարգ-93» եւ «Եվրոպական հաշիվների համակարգ-95» միջազգային մեթոդաբանությունների համաձայն՝ ամբողջ տնտեսության, ինչպես նաեւ կառուցվածքային հատվածների

մակարդակով Հայաստանի ազգային հաշիվների համակարգի վիճակագրության վարում է կատարելագործում՝ մինչև «Ազգային հաշիվների համակարգ- 2008» նոր մեթոդաբանության ամբողջական ներդրումը.

2) «Ազգային հաշիվների համակարգ- 2008» նոր մեթոդաբանության ներդրման աշխատանքների իրականացում, մասնավորապես առաջնահերթության կարգով՝ մեթոդաբանական փոփոխության եւ տվյալների վերանայումների ազդեցության գնահատում համախառն ներքին արդյունքի բացարձակ ծավալի եւ դինամիկայի վրա.

3) ֆինանսական եւ ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) վիճակագրության վարում՝ ըստ ենթահատվածների.

4) «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին» համապատասխան համախառն ներքին արդյունքի արտադրության հաշվի կազմում.

5) «Հիտարկվող տնտեսության» չափերի գնահատման մեթոդաբանության եւ հաշվարկների կատարելագործում Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) «Աղյուսակային մոտեցման» սկզբունքի կիրառմամբ.

6) ազգային հաշիվների համակարգում՝ «ծախսեր-թողարկում» աղյուսակների կազմման աշխատանքների իրականացում.

7) ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայությունների գնահատման մեթոդաբանության կատարելագործում.

8) ազգային հարստության բաղադրիչների վիճակագրության վարում եւ կատարելագործում.

9) ազգային հաշիվներում հիմնական միջոցների սպառման գնահատման մեթոդաբանության կատարելագործում:

### **2.1.2. Արդյունաբերություն**

1) «Տնտեսական գործունեության տեսակների» (ՏԳՏ) եւ «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» (ԱՂԳՏ) Հայաստանի դասակարգիչներին համապատասխան՝ արդյունաբերության ոլորտի վիճակագրության վարում.

2) արդյունաբերության վիճակագրության տվյալների հավաքման եւ մշակման մեթոդաբանության շարունակական կատարելագործում՝ միջազգային չափանիշներին ու ստանդարտներին համապատասխան.

3) հաշվառման դաշտի ամբողջականացման ապահովման նպատակով հիտարկվող (չհաշվառվող) առանձին արտադրատեսակների գծով գնահատման գործիքների կիրառում եւ դրանց մեթոդաբանության կատարելագործում.

4) էներգահաշվեկշիռ կազմելու նպատակով անհրաժեշտ մեթոդաբանական եւ հաշվառման կազմակերպման աշխատանքների իրականացում:

### **2.1.3. Գյուղատնտեսություն**

1) «Տնտեսական գործունեության տեսակների» եւ «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգիչներին համապատասխան՝ գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության վարում.

2) գյուղատնտեսության վիճակագրության տվյալների հավաքման եւ մշակման մեթոդաբանության շարունակական կատարելագործում՝ միջազգային չափանիշներին ու ստանդարտներին համապատասխան.

3) գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման գործիքի կատարելագործում՝ միտված ցուցանիշների մանրամասնեցվածության խորացմանը.

4) բուսաբուծական եւ անասնաբուծական մթերքի արտադրության առանձնահատկություններից ելնելով՝ դրանց ծավալների ճշգրտման գործիքակազմի կատարելագործում՝ միտված բերքատվության, մթերատվության, կորուստների եւ այլ ցուցանիշների գնահատման որակի բարձրացմանը.

5) ԱՄՆ գյուղդեպարտամենտի եւ Եվրոպական միության «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» ԹՎԻՆԻԳ ծրագրի ներքո Եվրամիության փորձագետների աջակցությամբ գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ Միավորված ազգերի կազմակերպության պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցների համաձայն:

#### **2.1.4. Շինարարություն**

- 1) «Տնտեսական գործունեության տեսակների» եւ «Արտադրանքի դասակարգում» ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգիչներին համապատասխան՝ շինարարության ոլորտի վիճակագրության վարում.
- 2) շինարարության հիմնական ցուցանիշների մեթոդաբանության կատարելագործում եւ դրա համադրելիության ապահովում՝ գործող միջազգային չափանիշներին եւ ստանդարտներին համապատասխան.
- 3) շինարարության իրական ծավալների ամբողջականության ապահովման եւ արժանահավատության բարձրացման, չհաշվառվող ծավալների գնահատման նպատակով դիտարկումների մեխանիզմի կատարելագործում:

#### **2.1.5. Տրանսպորտ եւ կապ**

- 1) «Տնտեսական գործունեության տեսակների» եւ «Արտադրանքի դասակարգում» ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգիչներին համապատասխան՝ տրանսպորտի եւ կապի ոլորտների վիճակագրության վարում.
- 2) ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական ցուցանիշների (բեռնաուղեւորափոխադրումների, բեռնաուղեւորաշրջանառության) գծով չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատման գործիքների կիրառում եւ դրանց մեթոդաբանության կատարելագործում՝ ըստ միջազգային չափորոշիչների.
- 3) տրանսպորտի եւ կապի ոլորտների վիճակագրության մեթոդաբանության կատարելագործում եւ դրա համադրելիության ապահովում՝ գործող միջազգային չափանիշներին եւ ստանդարտներին համապատասխան:

#### **2.1.6. Առեւտուր եւ այլ ծառայություններ**

- 1) «Տնտեսական գործունեության տեսակների» եւ «Արտադրանքի դասակարգում» ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգիչներին համապատասխան՝ առեւտրի եւ ծառայությունների ոլորտի վիճակագրության վարում.
- 2) առեւտրի եւ այլ ծառայությունների ոլորտների վիճակագրության մեթոդաբանության կատարելագործում եւ դրա համադրելիության ապահովում՝ գործող միջազգային չափանիշներին եւ ստանդարտներին համապատասխան.
- 3) առեւտրի եւ այլ ծառայությունների ոլորտում չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատման գործիքների կիրառում եւ դրանց մեթոդաբանության կատարելագործում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

#### **2.1.7. Գներ եւ սակագներ**

- 1) Եվրամիության երկրներում հաշվարկվող Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ սպառողական գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը համահունչ դարձնելով Եվրամիության չափանիշներին եւ համապատասխանեցնելով Եվրամիության օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Դրանով պայմանավորված՝ սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործում, դիտարկվող ապրանք-ծառայությունների կազմի, կառուցվածքի վերանայում եւ ընդլայնում, գամբյուղում ներառված ապրանք-ծառայությունների կշիռների վերահաշվարկ.
- 2) արդյունաբերական եւ գյուղատնտեսական արտադրանքների, արտաքին առեւտրի գների, բեռնափոխադրումների սակագների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության շարունակական կատարելագործում. հետազոտման դաշտի ընդլայնում, դիտարկվող արդյունաբերական կազմակերպությունների եւ գյուղացիական տնտեսությունների ընտրանքի վերանայում, գների հետազոտության կազմակերպում՝ միջազգային չափանիշներին ու դասակարգումներին համապատասխան.
- 3) համախառն ներքին արդյունքի եւ ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային գլոբալ համադրումների ծրագրի 2011թ. ցուցանիշներով համադրումների աշխատանքներին մասնակցության գործընթացի իրականացում եւ վերջնական արդյունքների հրապարակում: Միջազգային գլոբալ համադրումների ծրագրի հաջորդ փուլի աշխատանքներին մասնակցելու համար նախապատրաստական աշխատանքների իրականացում:

#### **2.1.8. Աշխատանքի շուկա**